ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի (հարցման կարգով)
N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Ալբերտ Արմենի Հայրապետյանի «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի իրավական տեսանկյունը» (The Legal Aspect of Nagorno-Karabakh Issue)** մենագրության հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող հարցերը շատ հրատապ են և կարևոր ոչ միայն հայերի, այլև, ընդհանրապես, միջազգային հանրության համար: Այս խնդիրներից է կախված ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի անվտանգությունն ու կայունությունը: Այս առումով Ալբերտ Հայրապետյանի գիրքը մեծ նշանակություն ունի ժամանակակից իրավական և քաղաքական մտքի համար: Հեղինակը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը քննարկել է պատմության լայն համատեքստում, ինչը հնարավորություն է տվել բացահայտել որոշ թաքնված շերտեր: Գրքի առավելություններից մեկն այն է, որ խնդրի բոլոր ասպեկտները ձևակերպված են հարցերի տեսքով, ինչը հասկանալի է դարձնում իրավիճակը և հնարավորություն տալիս հնարավորինս խուսափել ստուգելի պատմական փաստերից: Հետազոտությունն ընդգրկում է իրավական հարցերի լայն շրջանակ՝ Արցախի կարգավիճակի իրավականությունից մինչև ռազմական հանցագործություններ, միջազգային քրեական իրավունքից մինչև միջազգային մարդասիրական իրավունք: Բարձրացված հարցերը խարսխված են ՄԱԿ-ի կանոնադրության, միջազգային կոնվենցիաների, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի նախադեպային որոշումների և այլ միջազգային իրավական փաստաթղթերի վրա: Արցախյան հիմնախնդիրը հայաստանյան գիտական գրականության մեջ և հանրային խոսույթում գլխավորապես քննարկվել է քաղաքական, պատմական և զգայական հարթություններում, մինչդեռ հակամարտության իրավական կողմը մնացել է ստվերում, ուստի, այս առումով աշխատությունն առանձնակի արժեքավոր է և այն կարող է որպես ուղեցույց ծառայել ինչպես քաղաքականություն մշակողների, այնպես էլ ուսանողների համար:

Մենագրության վերաբերյալ ստացվել է 3 դրական կարծիք.

1) Ցոլակ Ակոպյան՝ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի դեկան, քաղաքական գիտությունների թեկնածու:

2) Դավիթ Մոսինյան՝ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի դոցենտ:

3) Նազելի Սուքիասյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հասարակագիտության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված մենագրությունը գրված է մատչելի լեզվով, որն էլ ավելի արժեքավոր է դարձնում հետազոտությունը, քանի որ այն կարող է կարդալ նաև օտարերկրյա ընթերցողը: Աշխատանքը կարող է օգտակար լինել իրավաբանների, միջազգայնագետների, քաղաքագետների, պատմաբանների և արցախյան հակամարտությամբ հետաքրքրվողների համար: Այն աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ, խորությամբ և ներկայացված տեղեկատվության արժեքով:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով համալսարանի գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի նիստի որոշումը՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու **Ալբերտ Արմենի Հայրապետյանի «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի իրավական տեսանկյունը» (The Legal Aspect of Nagorno-Karabakh Issue) մենագրությունը** երաշխավորել հրատարակության: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (կողմ՝ 56, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. դեկտեմբերի 21
Երևան